

ՏԻԿ. ԵՂԻՍԱՐԷԹ ԶՕՐԵԱՆ

Ժրնեւի հայ դաղութը նախաձեռներ է տօնելու Տիկին Եղիսարէթ Զօրեանի հանրային - մանկավարժական դործունէութեան 40 ամեայ յորելեանը: Սրտանց ողջունում ենք այդ նախաձեռնութիւնը: Տիկ. Զօրեանի տօնը մեզ համար թանգ է երկու տեսակէտից. նախ՝ որովհետեւ յորելեարը ինքնին աչքի ընկնող դէմք է. երկրորդ՝ նա կեանքի ընկերն է մեր Մեծ Ուսուցիչ եւ Առաջնորդ Ռոստոմի: Տօնել Տիկ. Զօրեանի յորելեանը մեզ համար նշանակում է ո՛չ միայն երախտագիտութեան տուրք տալ Տիկնոջ հայ ժողովրդին մատուցած ծառայութեանց համար, այլեւ յարգանք արտայայտել Մեծ Յեղափոխականի յիշատակին:

Տիկին Եղիսարէթը ծնւել է Եռւշում 1874 թ. մայիս 5-ին: Հայրը՝ Ղարաբաղի նշանաւոր Միրզա - Ղահրամանի տղի Իսահակ Մելիք - Շահնազարեանը - Սահակ աղան՝ պաշտօնաթող՝ փոխ - դնդապետ էր որ իր սկզբնական կրթութիւնը ստացել էր Տաթեւի վանքում: Ազատամիտ եւ ազգասէր մի մարդ, որ նոյն ոգով էլ դաստիարակեց իր տղաներին եւ աղջիկներին:

Մինչեւ 12 տարեկան հասակը Տիկ. Եղիսարէթը սովորեց Եռւշում ուսական դպրոցում, որ հիմնւած էր աղջկական եւ հարուստ ընտանիքների դաւակնների համար: Ապա տեղափոխուեց Թիֆլիս եւ մտաւ երկրորդ դիմնադրան: Թիֆլիսում ապրում էր մօրաքոյրների մօտ, որոնք ամուսնացած էին ուսւ բարձրաստիճան պաշտօնեաների հետ: Ընդունակ եւ լաւ սովորող աշակերտուհի էր: 1893 թ. Գիմնադրան ավարտեց առաջին կարգի մրցանակով՝ ոսկի մետալով:

Աշակերտութեան շրջանում Տիկ. Եղիսարէթը գտնւում էր մեծ մասամբ ուսական շրջաններում: Նրա մի մօրաքոյրը ամուսնացած էր Կոյկիասի Ուսումնական շրջանի տեսուչ Շէնդէրի հետ: Նրա ազգականների մէջ կային զինուորականներ եւ պաշտօնեայններ: Երբեմն, երբ հնարաւոր էր լինում, ազգականներից դադտնի յաճախում էր եւ հայկական շրջանակներ: Օր. Եղիսարէթը լինում էր եւ Քրիստափորի ու Սիմոն Զաւարեանի խմբի ժողովներում: Քրիստափորն այդ ժամանակ մաթեմատիկայի դասեր էր տալիս նրա մօրաքոյրը որդիներին: Օր. Եղիսարէթի երկու եղբայրները Պետրովսկայա Ակադեմիայից ուսանողական ընկերներ էին Զաւարեանի եւ Ռոստոմի հետ



ՏԻԿԻՆ ԵՂԻՍԱԲԵԹ ԶՕՐԵԱՆ

եւ նոյնպէս մասնակցում էին խմբական հաւաքոյթներին: 1892 թրւին, այդպիսի հաւաքոյթներէրից մէկում, 19 ամեայ Եղիսարէթը Զաւարեանի մօտ հանդիպում է Ռոստոմին: Ընկերները նրան կոչում էին «Բոթոթ»: Համեստ, լուսկեաց, նիհար ու դժգոյն, պերճանքից զուրկ՝ երխասարդ Ռոստոմը հաճելի տպաւորութիւն չգործեց դեռատի աղջկան վրա:

Մի տարի յետոյ, 1894-ին, օր. Եղիսարէթը արդէն ժընկեւում է: Այնտեղ էր եւ Ռոստոմը, որ դրադեւ էր «Դրօշակ»-ով: Նրան օգնում էին ուսանողներ Սիմոն Շխեանը, Գ. Խաթալը, Յովնան Դաւթեանը, երբ լինում էր ժընկեւում, եւ ուրիշներ: Ռոստոմը ապրում էր մի համեստ սենեակում, որ մի ժամանակ եւ խմբադրատուն եւ դրաշարանոց էր: Դաշնակցութիւնը միջոց չունէր, շատ չնչին գումար էր յատկացնում իր պաշտօնաթերթին, իսկ ուրիշ հասոյթներ չկային:

Ժընկեւում օր. Եղիսարէթը մտնում է համալսարանի բնագիտական բաժինը: Եղբայրը հետը մնում է 4 ամիս, ապա յանձնելով իր ընկեր Ռոստոմի խնամքին՝ վերադառնում է հայրենիք: Այստեղ օր. Եղիսարէթը աւելի մօտից է ճանաչում Ռոստոմին, ծանօթանում է նրա ապրելակերպին, դադարարներին, գործին եւ դեռ մի տարի չանցած, 1894-ին տեղի է ունենում նրանց նշանադրութիւնը, ներկայութեամբ Գ. Խաթալի եւ Սիմոն Շխեանի: Օր. Եղիսարէթը՝ ձեռքը «Դրօշակ»-ի վրա դրած երգում է, որ երբեք, ոչ մի բանով չի խանդարի Ռոստոմին հասարակական - յեղափոխական գործունէութեան մէջ:

Ժընկեւի նշանադրութիւնը, սակայն, բուռն դժգոհութիւն առաջ բերեց Եղիսարէթի ծնողների եւ ազգականների մէջ: Ինչպէ՞ս, Մեյիք - Շահնազարեան աղնւական ընտանիքի զաւակը դատնայ կին մի աղքատ ու տկոյր յեղափոխականի, դիւղացիական ստոր ծագում ունեցող մէկի, որ նոյնիսկ ապրելու իրաւունքից զրկւած է Ռուսաստանում: Հակառակութիւնը խիստ մտնական էր, բայց օր. Եղիսարէթն էլ Մեյիք - Շահնազարեան տոհմից էր. նրա կամքն էլ կամք էր: Բախումը դարձաւ անխուսափելի. նրան զրկեցին օժիտից՝ Խանքենդի գիւղից եւ մերժեցին ճանաչել նրանց ամուսնութիւնը:

Ժընկեւում օր. Եղիսարէթը մասնակցում է հասարակական կեանքին, Ռոստոմի հետ շարում է «Դրօշակ»-ը, յօդւածներ է գրում, առհասարակ օգնում է նրան: Միւս կողմից, եռանդով հետեւում էր համալսարանական աշխատանքներին: Շնորհիւ իր բացառիկ ընդունակութիւնների՝ շուտով աչքի ընկաւ ուսանողների մէջ: Նրա ուսուցիչը, յայտնի դիտնական Կարլ Ֆոկտը, մէկից աւելի անգամներ

յորդորում էր նրան ձեռք քաշել նշանածից եւ նւիրել գիտութեան, նոյնիսկ գիտական պաշտօն էր առաջարկում նրան Իտալիայում, բայց այդ յորդորները մնացին անհետեւանք: Օր. Եղիսարէթը երեք եւ կէս տարում աւարտեց համալսարանական դասընթացը եւ քիչ յետոյ վերադարձաւ Թիֆլիս, իր մօրաքոյրների մօտ: 1898 թ. սեպտ. 27-ին տեղի ունեցաւ նրա եւ Ռոստոմի հարսանիքը: Պսակը կատարեց Քամոյեց եկեղեցում, պալատի գիմնաց: Խաչեղբայրներ էին նրա մօրաքրոջ երկու որդիները՝ Հեծելազօրի սպաներ: Սրանց ինչպէս եւ բարձրաստիճան անձանց ներկայութիւնը հարսանիքին տալիս էր առանձին բնոյթ. ոչ ոք չէր կարող ենթադրել, որ սա հարսանիքն է մի քաղաքական յանցաւորի, որին ոստիկանութիւնը փնտրում էր ամէն տեղ:

Եկեղեցուց հարսնէւորները գնացին Յ. Քաջազնունենց տունը, ուր տեղի ունեցաւ հարսանեկան հանդէսը: Ներկայ էին հարսի ազգականները, բարեկամները. ներկայ էր եւ դաշնակցական երիտասարդութիւնը՝ Քր. Միքայէլեան, Ս. Զաւարեան, Ս. Շիսեան եւ ուրիշներ: Հարսանիքը անցաւ շատ ուրախ եւ ստացաւ մի տեսակ գաղափարական հաւաքոյթի բնոյթ: Նոյն գիշերն իսկ, ոստիկանութեան հետապնդումների պատճառով, փեսան թողեց Թիֆլիսն ու հեռացաւ արտասահման, իսկ հարսը տեղափոխեց Բաղու, ուր ապրում էր մասնաւոր դասերով եւ նաւթարուղերի յատակագծերի գծագրութեամբ:

Միայն 1899 թւի ամառը նորապսակ զոյրը դտաւ իրար: Տիկին Եղիսարէթը մեկնեց արտասահման: Ռոստոմը նրան դիմաւորեց Ռուչչոնկ քաղաքում: Ապա հաստատեցին Ֆիլիպէում, ուր Տիկ. Եղիսարէթը հիմնեց մի մասնաւոր դպրոց, գլխաւորապէս գաղթական երեխաների համար: Դպրոցը նիւթական օժանդակութիւն էր ստանում Բագուից եւ դրւած էր մանկավարժական օրինակելի հիմքերի վրա: Դպրոցում դասաւանդում էր եւ Ռոստոմը, իսկ յետոյ՝ նաեւ Կար. Պիոնեանը: Տիկ. Եղիսարէթին օգնում էին նրա Ե հասակաւոր աչակերտուհիները,*¹) որոնց հետ նա պարապում էր առանձին՝ պատրաստելով դպրոցական ասպարէզի համար: Բնակաւնարար, դպրոցի հոգին ինքը Տիկ. Եղիսարէթն էր, որ պարապմունքի ժամերից դուրս, երեկոները, զբաղւում էր նաեւ հասարակական գործունէութեամբ՝ դասախօսութիւններով, ծնողական ժողովներով եւ այլն:

Դպրոցը հետզհետէ դարգացաւ, շրջապատեց հանրային համա-

*¹) Տիկ. Սաբենիկ Տէր-Ղաւթեան, Տիկ. Պերնուհի Բարսեղեան եւ ուրիշներ:

կըրանքով եւ դարձաւ օրինակելի կրթական մի հաստատութիւն: Բայց կեանքի եւ աշխատանքի պայմանները շատ ծանր էին, ապրուստի միջոցները սահմանափակ: Ռոստոմը դրադեաժ էր կուսակցական գործերով: Յաճախ ճանապարհորդում էր: Դպրոցի եւ ընտանիքի ամբողջ հոգսը ընկած էր Տիկ. Եղիսաբէթի ուսերին, որ երկրորդ զաւակի ծննդաբերութեան վրա ծանր հիւանդացաւ եւ երեք տարւայ անդուլ աշխատանքից յետոյ, ստիպւած եղաւ թողնել սիրած գործն ու հեռանալ Կովկաս: Դպրոցը շարունակեց Կ. Պիոնեանը Տիկ. Եղիսաբէթի աշակերտուհիների հետ միասին:

Ինչպէս հայ կեանքում ամէն գործ, Ֆիլիպէի վարժարանն էլ, բնականաբար, ունէր հակառակորդներ: Մանաւանդ, խիստ թշնամաբար էին վերաբերում հնչակեանները, որոնք դպրոցի յաջողութիւնը նկատում էին իրենց մրցակից կուսակցութեան յաջողութեան նըշան: Երբ Տիկ. Եղիսաբէթը հեռացաւ, հնչակեանները լուր տարածեցին, թէ նա մեռել է ճանապարհին, եւ Ֆիլիպէում այդ առթիւ նոյնիսկ հոգեհանդիստ տեղի ունեցաւ:

Կովկասում այս անգամ տեղի ունեցաւ հաշտութիւն Տիկ. Եղիսաբէթի եւ ծնողների միջեւ: Վերջիններիս աջակցութեամբ նա անցաւ Զւելցերիա, ուր հիմնովին ապաքինած վերադարձաւ Թիֆլիս եւ ամբողջապէս նւիրեց հասարակական - կրթական գործունէութեան: Միաժամանակ իր աշխատանքով պահում էր եւ Ռոստոմի ընտանիքը:

Հակառակ որ շատ հրապուրիչ առաջարկներ էին անում ուսական դպրոցներին, Թիֆլիսում Տիկ. Եղիսաբէթը ուզեց հէնց սկզբից պաշտօն ստանալ հայկական վարժարաններում: Այս վերջինները, սակայն, Դաշնակցութեան հակառակորդ հոգաբարձութիւններ ունէին, որոնք ամէն կերպ խոչընդոտ հանդիսացան, որ յայտնի դաշնակցականի կինը մտնի հայկական դպրոց: Այդ պատճառաւ նա ստիպւած եղաւ դասեր առնել «Վարժուհիների Ընկերութեան Ռուս Դպրոցում»: Եւ միայն 1905 թ., երբ Յովնանեան Դպրոցի հոգաբարձութիւնը փոխեց, Տիկ. Եղիսաբէթը հրաւիրեց այնտեղ որպէս դասատու: Յետոյ, երբ Յովնանեանում նորից հոգաբարձական փոփոխութիւն տեղի ունեցաւ, անցաւ Գայլանեան վարժարանը: Երկու դպրոցում էլ նա աւանդում էր բնական գիտութիւններ եւ շատ սիրւած էր աշակերտուհիների կողմից:

Դպրոցից դուրս Տիկ. Եղիսաբէթը լայն մասնակցութիւն ունէր հասարակական կեանքում. Դասախօսում էր Զուբալովի Տան Ժողովրդական համալսարանում, գլխաւորապէս, բնական գիտութիւն-

ներից, առողջապահությունից եւ ապրանքագիտությունից, դասեր էր տալիս Բարեգործական Ընկերություն արհեստանոց – դպրոցում, աշխատում էր կանանց շրջանում: Ընտրւեց Ներսիսեան Դպրոցի հոգաբարձական կազմի անդամ եւ գործօն մասնակցություն ունեցաւ դպրոցի ծրագրի մշակութեան մէջ:

Այս կենդանի եւ հելիհեւ աշխատանքը տեւեց մինչեւ 1914 թ. ամառը, երբ Տիկին Չօրեանը մեկնեց Ժընեւ մի քիչ հանդրատանալու եւ համալսարանում դոկտորի քննություն տալու համար: Բայց վրա հասաւ պատերազմը. նա բոլորովին կտրւեց Կովկասից եւ մնաց առանց նիւթական միջոցի: Եւ միայն շնորհիւ աջակցութեան Հ. Յ. Դաշնակցութեան, որ ստանձնեց նրա աղջկայ օր. Թագուշի կրթութեան ծախսը, կարողացաւ անցկացնել պատերազմի արհաւիրից տարիները եւ հետեւել համալսարանի աշխատանքներին եւ կրթություն տալ զաւակին: Վերջինս աւարտեց Գեղարեւստից Վարժարանը եւ այսօր շնորհալի նկարչուհի է, իսկ ինքը լրացրեց համալսարանական աշխատանքները եւ ներկայացնելով «Recherches histologiques sur les genres Hyalinia et Zonites» ուսումնասիրությունը իբրեւ աւարտական շարադրություն՝ 1920 թ. ստացաւ բնական գիտությունից դոկտորի տիտղոս:

Հետզհետէ վրա հասած դժբախտությունները եւ Ռոստոմի մահը պատճառ դարձան, որ Տիկ. Չօրեանը այլեւս Կովկաս չվերադառնայ: 1923 թ. նա պաշտօնի կոչւեց Քրաֆտ – Բոնարի անդուլ ջանքերի շնորհիւ ստեղծւած Հայկական Որբանոցում եւ 11 տարի շարունակ զբաղւեց որբերի դաստիարակութեան գործով: Բայց 1934 թ. Քրաֆտ – Բոնարի Որբանոց – Դպրոցը փակւեց, եւ Տիկ. Եղիսաբէթը նորից զրկւեց իր սիրած գործից, այս անգամ նիւթական եւ բարոյական անհամեմատ աւելի ծանր պայմաններում: Սակայն, որքան եւ դառն լինի վիճակը, նա գոհունակութեամբ կարող է նայել իր անցած ճանապարհին: Նա իր շացառիկ կարողությունը, մրտաւոր հարուստ պաշարը, իր ամբողջ կեանքն նւիրեց հայ ժողովրդին: Նրա ձեռքից անցան բազմաթիւ աշակերտներ եւ աշակերտուհիներ: Նա ինչ որ ունէր զոհարեց հայ դպրոցին ու հայ հասարակութեան: Եւ հպարտութեամբ կարող է ասել. «Ես կատարեցի իմ պարտքն ու ուխտը»: Այժմ հերթը հասարակութեանն է: Ժընեւի դադութը նրան տալիս է հնարաւորություն ասելու. «Ես էլ կատարեցի իմ պարտքը»:

Ս. ՎՐԱՑԵԱՆ

